# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

**№ 03/26-1/5736-2023**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՊԱՐՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Ուսումնասիրելով Երևանի պետական համալսարանի 20.03.2023թ. գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ եթե գրության մեջ նշված դրամաշնորհի պայմանագիրը հանդիսանալու է ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված միջազգային պայմանագիր և դրանով կսահմանվեն այլ նորմեր, քան նախատեսված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ապա պետք է կիրառվեն այդ նորմերը: Հակառակ դեպքում այն է, եթե այդ պայմանագիրը չի հանդիսանալու ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացված միջազգային պայմանագիր կամ հանդիսանալու է, սակայն այլ նորմեր չեն սահմանվելու, ապա տրամադրվող դրամաշնորհի շրջանակում ձեռքբերումը պետք է իրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերով:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել այն որոշակի նշանակությամբ օգտագործելով: Այդպիսի պայմանի բացակայության դեպքում

քաղաքացուն կատարված նվիրաբերությունը համարվում է սովորական նվիրատվություն: Մնացած դեպքերում նվիրաբերված գույքը նվիրառուն պետք է օգտագործի դրա նշանակությանը համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ եթե վերոնշյալ գրության մեջ նշված ֆինանսական միջոցները հանդիսանում են նվիրաբերություն և այդ պայմանագրով կսահմանվեն այլ նորմեր, քան նախատեսված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ապա պետք է կիրառվեն այդ նորմերը: Հակառակ դեպքում, այն է՝  եթե նշված ֆինանսական միջոցները չեն հանդիսանում նվիրաբերություն կամ հանդիսանում են նվիրաբերություն, սակայն պայմանագրով նախատեսված չեն այլ նորմեր, քան նախատեսված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ապա տվյալ դեպքում գնումները պետք է իրականացվեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նորմերով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X 

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Հ.  Ջաղինյան
Հեռ. 011800258